

Վ. Լ. ԱՃԵՄՅԱՆ, Գրական արևմտահայերենի ձևավորումը,
Երևան, 1971, 291 էջ, գիրք 1 n. 52 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակել է Վ. Աճեմյանի «Գրական արևմտահայերենի ձևավորումը» աշխատությունը: Այստեղ լայն ընդգրկումով վեր է հանվում արևմտահայ աշխարհաբարի պատմությունը՝ սկսած XVIII դարի սկզբներից մինչև 1870 թ.: Բավական դժվարին այս խնդիրն իրականացնելու և առաջադրվող բազմապիսի ու բազմաթիվ հարցերին համակողմանիորեն պատասխանելու համար հեղինակը նյութերի հավաքման, դասդասման ու համադրման ուղղությամբ կատարել է աշխատատար մեծ գործ: Նրա երկար տարիների պրպտումները պսակվել են նշանակալից հաջողությամբ: Գրախոսվող մենագրության հեղինակը արևմտահայ աշխարհաբարի պատմության և ուսումնասիրության մի շարք հարցերի տվել է նոր մեկնաբանություն: Անհրաժեշտ ենք համարում հատկապես նշել փաստերի նկատմամբ Վ. Աճեմյանի ունեցած խնամքոտ ու պատասխանատու վերաբերմունքը, մանրամասների մեջ թափանցելու, դրանց յուրահատկությունները բացահայտելու, աննշան թվացող փաստից անգամ էական եզրակացություններ հանելու նրա կարողությունը:

Գրախոսվող աշխատության առաջին գլուխը նվիրված է արևմտահայության 1700—1840 թթ. մշակութային կենտրոնների համառոտ պատմության և հայոց հին ու նոր լեզուների գործածության շրջանակների որոշման ընդհանուր հարցերին: Հեղինակը ցույց է տալիս XVII—XVIII դարերում գրաբարի նկատմամբ հետաքրքրության ընդլայնվելու պատճառները, խոսում գրաբարի և աշխարհաբարի գործածության ոլորտների մասին, պարզում ժամանակի քերականների դիրքորոշումը՝ ինչ ու նոր լեզուների փոխհարաբերության բնույթի և գործառական հնարավորությունների գնահատման հարցում: Պատմականորեն միանգամայն ճիշտ են բացատրված XIX դարի առաջին տասնամյակներից սկսած նոր լեզվի գործածության շրջանակների զգալի ընդարձակման ազդակները: «Դա կապված էր, — գրում է հեղինակը, — գարու աշխարհականացման ոգու հետ, որ ֆրանսիական հեղափոխությունից հետո տարածվում էր ամենուրեք, մուտք գործելով նույնիսկ հե-

տամնաց Թուրքիա, հատկապես Կ. Պոլիս» (էջ 25): Արևմտահայության ազգային ինքնագիտակցության և լուսավորական գաղափարների աշխուժացումը, կրթական շարժման և տպագրական գործի տարածումը մեծապես նպաստում են աշխարհաբարի գործառական ոլորտների ընդլայնմանը:

Մենագրության երկրորդ գլխում քննվում է գրական արևմտահայերենի կազմավորման ընթացքը 1700—1840 թթ., որ հայ լեզվաբանության մեջ ընդունված է համարել աշխարհաբարի տարերային զարգացման շրջան: Վ. Աճեմյանը ամենից առաջ փորձում է պարզել գրական արևմտահայերենի բարբառային հիմքի հարցը: Նա փաստական հարուստ նյութի մանրաքննի վերլուծություններով ցույց է տալիս, որ արևմտահայ հատվածում, խոսակցական զանազան բարբառներից, այդ դարերում գրավոր լեզվի նախապատվությունը ստանում է Փոքր Ասիայի աշխարհաբարը, մասնավորապես Կ. Պոլսի խոսվածքը:

Հեղինակը գրական նոր լեզվի կազմավորման ընթացքին հետևել է շրջան առ շրջան՝ ամեն մի առանձին ժամանակահատվածի համար կանգ առնելով հնչյունաբանության, ձևաբանության, բառագիտության, մասամբ նաև ուղղագրության և շարահյուսության բնագավառների հատկանշական երևույթների, նոր լեզվի մեջ բարբառային և գրաբարյան ձևերի ներթափանցումների ու դրանց զուգահեռ օգտագործումների, գրաբարի ննացած ձևերի աստիճանական նվազման, քերականական և բառային խայտաբղետության ու բազմաձևությունների պայմաններում այս կամ այն ձևին նախապատվություն տալու մեջ նկատվող միտումների և ուրիշ շատ խնդիրների վրա: Որոնց պարզաբանումը սկզբունքային նշանակություն ունի ընդհանրապես աշխարհաբարի պատմության համար:

Վ. Աճեմյանը մեծ տեղ է հատկացրել նաև ցրապայքարին: Վերջինիս մեկնաբանությանը նա մոտեցել է տվյալ ժամանակաշրջանում արևմտահայության սլատմա-հասարակական որոշակի պայմանների գնահատման տեսանկյունից: Հանգամանորեն և հիմնականում ճիշտ են բացատրված նրա երբ և ինչպե՞ս սկսվելը, դրա

ձևավորման և առաջնորդող գործոնները, աշխարհաբարյանների և գրաբարյանների շարքերում նկատվող տարամիտումների հիմքերն ու շարժառիթները, բանավիճող կողմերի հայեցակետերը, առանձնատկությունները և այլն: Հեղինակն առաջին անգամ շրջանառության մեջ է մտցրել նոր ու հետաքրքրական շատ նյութեր, որոնք կարևոր են նաև արևելահայ իրականության մեջ ծավալված գրապայքարի պարզաբանման համար:

Աշխատության հաջորդ երկու գլուխները վերաբերում են 1840—1870 թթ. գրական արևմտահայերենի բառապաշարի մշակման և քերականական կանոնավորման հարցերին: Քրեմլում են աշխարհաբարի բառապաշարի հարստացման ուղիներն ու միջոցները, նշվում են այդ շրջանում նկատվող բառապաշարային գրեթե բոլոր տեղաշարժերը: Քերականական կանոնավորմանը նվիրված գլխում հեղինակը հիմնական ուղղությունը դարձրել է գրական արևմտահայերենի նորմավորման ու մշակման խնդիրներին: Ձևաբանության բնագավառից առնված բազմաթիվ իրողությունների համադրումով Վ. Աճեմյանը բացահայտում է հետազոտվող ժամանակաշրջանի լեզվավիճակի մի շարք հատկանշական կողմերը: Չանդրադառնալով գրքում արծարծված բոլոր հարցերին ու եզրակացություններին, հարկ ենք համարում անել որոշ դիտողություններ:

1. Վ. Աճեմյանը գրական արևմտահայերենի կազմավորմանը հետևել է շրջան առ շրջան՝ շուրջ մեկ և կես հարյուրամյակի ընդգրկումով (1700—1840 թթ.): Մեր կարծիքով, այս մոտեցումը առաջացնում է որոշ դժվարություններ և անտեղի կրկնություններ ստեղծում: Թվում է, թե ավելի նպատակահարմար կլիներ հնչյունաբանության հարցերը համատեղ քննարկել, որով գրական արևմտահայերենի կազմավորման տարբեր շրջաններում վերջինիս և բարբառների հնչյունափոխական կապերի նկարագիրը ավելի ամբողջական կստացվեր: Նույն կերպ կարելի էր վարվել նաև ձևաբանության հետ:

2. Ուսումնասիրության բնույթից ելնելով, թերևս ավելորդ չէր կրկին անդրադառնալ Պոլսի խոսակցական լեզվի՝ միջին գրական հայերենի ժառանգը լինելու փաստացի հիմնավորմանը: Գրա համար գոնե ընդհանուր գծերով պետք է ներկայացվեին միջին գրական հայերենի, ավելի կոնկրետ՝ կիլիկյան հայերենի հնչյունաբանական և ձևաբանական համակարգերը և նոր միայն սրանցից պատմականորեն հանվեր Պոլսի խոսակցականը: Հայտնի է, որ վերջինիս ժառանգորդական առնչությունը միջին հայերենի հետ միջնորդավորված է փոքրասիական հայ բարբառներով, որոնց նստվածքը զգալի է նաև արևմտահայ աշխարհաբարում: Հարկավոր էր ավելի պարզ ցույց տալ գրական արևմտահայերենի հիմքում ընկած լեզվական այգ ըստ էության անհամասեռ համակարգը:

Վ. Աճեմյանի մոտ ընդհանրապես նկատելի է համակարգային վերլուծություններից խուսափելու միտում: Մինչդեռ դա շատ կարևոր է, մանավանդ նման մի ուսումնասիրության համար: Նլակետային համակարգի առանձնացումով և դրա բաղադրիչների պատմական զարգացման ընթացքը վերլուծության ենթարկելով հնարավոր կլիներ հստակորեն տեսնել համակարգից համակարգ վերափոխվող կամ արդեն վերափոխված, ինչպես նաև փոխանցվող կամ նույնական միավորները:

3. Քերականական այս կամ այն երևույթի կամ կոնկրետ որևէ ձևի արժեքավորման հարցում ներկայացված են ավելի քերականների մոտեցումները, քան նկարագրված է լեզվական առկա վիճակը: Միօրինակացման և կանոնավորման կապակցությամբ ստեպ-ստեպ քերականներին դիմելը, անշուշտ, կարևոր է, սակայն գլխավորը վերջին հաշվով բուն բնագրային փաստերն են:

Վ. Աճեմյանի «Գրական արևմտահայերենի ձևավորումը» աշխատությունը հայերենի պատմության ուսումնասիրության բնագավառում արժեքավոր գործ է:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

С. Х. МНАЦАКАНЯН. Звартноц. Памятник армянского зодчества VII в. М., 1971, 160 стр., цена 2р. 50 к.

Храм Звартноц, построенный в 643—662 гг.,— гениальное творение армянских зодчих раннего средневековья, одно из самых замечательных произведений средневековой архитектуры вообще, восхищавшее современников, не утратившее обаяния и поныне, хотя и находится в состоянии

руин. Стройная и величавая композиция трехъярусного храма небывалых по тем временам размеров воплотила в себе достижения многих поколений армянских зодчих. В этом здании запечатлен огромный прогресс художественной и технической мысли средневековой Армении и все-